


Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԵՎԱ  
ԱԶԴԱՆԾԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ

60

01 JAN 2009

891.99

9 - 95

ԳԱՀԱՆ ԳՐԵԳՈՐՅԱՆ

ԱՀ

19 NOV 2011

# ԱՐԵՎԱՆ ԱԶԴԱՆՇԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Պ Ո Ե Մ Ն Ե Ր  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

152.

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1939

26 MAR 2013

26495

ԽՍՀ ՎՈՐԵՒ

ԽՆԴՐԱԹՅԱՆ



1834  
40

ՎԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
С О Л Н Ц Е - Д Е В И З  
Գիշ. Արմ. ՀՀ, Երևան, 1989



## ՅԵՐԳԵԼՈՒՅՑ ԱՌԱՋ

Լցված եմ այսոր խինդով ափեալի,  
ինչպես գետերն անձրկից հետո .—  
Ասես առել եմ  
Գոռ հեղեղներից և հողմերից թափ,  
Վոր յերգեմ խինդով...  
Յես այսոր խենթ եմ, վարար ու հախուռն  
ինչպես Զանգուն ե, գարնան բարձրանում .—  
Յերգը պիտ լինի լայնահուն ու խոր  
Յեվ հստակ, վորպես գագաթների ձյուն:

1985



## Ս Ի Բ Տ

Յես մի հանքափոր, իսկ դու հանք ես, սի՛րտ,  
Վոր պեղում եմ քեզ և՛ որ, և՛ գլշեր...  
Քո վոլորտներում լուռ ու անհանդիստ,  
Տնքում ե ջահել գրիչն իմ անշեղ:

Յեթե աղքատ չես, մի լինիր ժլատ,  
Ժլատությունը յես չեմ սիրում, սի՛րտ.—  
Ի՞նչ լավ ե, գիտե՞ս, յերբ սիրոն ե շոայլ  
Յեվ ունի անհուն դանձեր լուսաշաղ...

Դե, շողա՛, շողա՛, թե ունես դանձեր,  
Տանք յերջանկավետ մեր հայրենիքին.  
Պոետը պետք ե լինի անձնավեր  
Յեվ շունչն ու վոդին ճուլած իր յերդին:



## Ք Ն Ա Ռ

Յերբեք չդաս, չերդես վերից,  
Ծիծաղալար դու իմ քնար...—  
Քեզ հյուսել եմ յես իմ սրտից,  
Վոր հարազատ—արթուն մնաս...

Արի քնա՛ր, իմ սիրելի,  
Փառքի պառնաթ մի բարձրանա,  
Վումանց պես ել չստորանաս,  
Վոր քեզ ատեն ու մոռանան:

Քեզ լարեցի այսոր կրկին,  
Վոր վաղն հպարտ մարտի գնամ...  
Հնչիր ուրախ և սրտադին,  
Գոռ փոթորկոտ կռվի նման...

Յերբեք չդաս, չերդես վերից,  
Ծիծաղալար դու իմ քնար...—  
Յերդենք յերդը ժողովրդի,—  
Առաջնորդին մեծահանձար...



## Խ Ն Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն

Դառնում ես տուն փողոցից,  
Նայում չուրջդ ու ժպտում.—  
Տրովում ե այդ պահին  
Կրծքիդ տակ մի խնդություն...

Հոգնած եյիր քիչ առաջ.  
Տխուր եյիր չե՞ վոր դու...  
Բայց վորտեղից այսքան չուտ,  
Աճեց մեջդ խնդություն:

— Հավաքվում ե անդադար,  
Ներծծվում ե ջրի պես.—  
Աւեկոծվում կրծքիդ տակ,  
Առորյան ե մեր այդպես...

1936

## Ս Ա Վ Ա Ռ Ն Ա Կ

Զկալովին, Բայդաւկովին, Բելյակովին

Ահա տեսեք բարձրացավ  
Պողպատաթև թռչումը.  
Յերգեց խրոխտ—սլացավ,  
Ինչպես վայրկյանն ե թռչում:

Ա՛խ, ինչքան խոր, համարձակ,  
Հնչեց յերգը պողպատի.  
Իմ որտի տեղ—կրծքի տակ,  
Թռղ այդ յերգը բաբախի...

Տեսեք—ինչպես ե թռչում  
Ամպերի մեջ, հողմի հետ  
Յեւ վայրկյանում յուրաքանչյուր  
Նոր յերկինք ե նվաճում...

ԶՈՐՍ ԴՑՈՒՑԱՁՈՒՆՆԵՐ

Գալիս են նըրանք—բաց արեք ճամբա...  
Դե, ալեկոծվեք իմ անզուսպ հույզեր,  
Թողած Հյուսիսում առաջին ճամբար,  
Գալիս են նըրանք—չորս դյուցազուններ...

Գալիս են նըրանք—բաց արեք ճամբա...  
Քաջ հերոսներին դափնիներ բերեք—  
Վորոնց դեմ բելեռն առաջին անզամ,  
Հավերժության մեջ զգաց իրեն հեռ:

Գալիս են նըրանք—բաց արեք ճամբա...  
Չորս հերոսներին սառցասարերի—  
Ո՛, ինչպիսի՞ փառք... ինչպիսի՞ ճամբալ.  
Հերսսատիպար չորս դյուցազների:

Գալիս են նըրանք—բաց արեք ճամբա...  
Դե, ալեկոծվեք իմ անզուսպ հույզեր—  
Թողած Հյուսիսում առաջին ճամբար,  
Գալիս են նըրանք—չորս դյուցազուններ...

ԶՐՈՒՅՑՑ ԱՆՏԱՌԻ ՀԵՏ

1.

Անհաղ կարոտով յեկա քեզ այցի,  
Գեղեցիկ անտառ, դարավոր ու վեհ—  
Սրտիս բյուրավոր դռները բացի  
Ու յնլա քո դեմ...

Տարածիր քո մութ սավանն անափ,  
Նստենք խոնջացած քաղցր զբույցի,  
Լողում ե սրտումս սիրո նոր կարապ՝  
Խանդը կտուցին...

Մեր կյանքն ալեկոծ նման ե ծովի,  
Սիրով, պայքարով, յերգերով առատ,  
Գոնե այս գիշեր բաց ծոցդ ծավի  
Յեկ ինձ գիրկոտ առ...

2.

Ո՛, անտա՛ռ, անտա՛ռ, գեղեցիկ ու թավ,  
Քո քարափներին լույսայդը ցողած,  
Ծոցիդ անհանդիստ արծիվն արթնացավ  
Կյանքին կարոտած...



Որորեց իրեն և ճյուղ և տերեւ,  
Ապրիլու քաղցր փափագով ծարավ —  
Լուսաստղն հրդեհվեց իմ գլխի վերև  
Հույսերով պայծառ...

3.

Հայրինի անտառ, անեղը անտառ,  
Քո մեծ անդորրը թվաց ինձ անթով —  
Վորքան ել լինի սլայքարը դաժան,  
Յես կյանքն եմ սիրում անհուն կարոտով...

Բարձրացիր մրրիկ, — ալեկոծի՛ր ծով,  
Առագաստները պարզեցի նավիս : —  
Նավն իմ չի գնա յերբեք կոր գծով,  
Վորքան ել ծովը մռնչա ցավից :

1985



12

## Ճ Ա Մ Բ Ա Ն Ե Ր

Ճամբաներ բարո՞վ, ճամբաներ բարո՞վ,  
Յես ձեղ ծանոթ եմ, ճանաչո՞ւմ եք ինձ —  
Բերել եմ հույզեր և անհուն կարոտ,  
Ճամբաներ բարո՞վ, ճամբաներ բարո՞վ ...

Արդյոք կհիշե՞ք տարիներն այն սեվ,  
Յերբ դաշնակները սփռում եյին մահ...  
Յերբ վոր հեռացավ — թողեց գյուղն հետեւ  
Մազերը խոխիվ մի վտիտ տղա ...

Թողեց ամեն ինչ և գյուղն իր ավեր,  
Թվում եր կորավ ու գնաց անդարձ:  
Ո, յես հողմածեծ այն չար տղան եմ,  
Վաղուց ձեղ կարոտ, ծանոթ ճամբաներ :

Փովեք իմ առջեւ — տարածվեք անծիր,  
Դեպի գյուղերը, դեպի ամեն կողմ —  
Կոր յես ինդությամբ ու յերգով անցնեմ,  
Մեր ծով դաշտերի, արտերի վրայով :

1985



13

## ՍՈՒՐՈՒՄ Ե ՔԱՄԻՆ

— Սուրում ե քամին դաշտերի վրայով,  
Հոսում են վարար գետերն ահարկու...  
Արեվն անափ նման վոսկե ծով,  
Ռուր ես գնում պոետ այդ դաշտերով գու:

Ո՞ւր ես գնում այլպես, լուս ու մտածկոտ,  
Ցեվ ի՞նչն ե արդյոք քեզ այստեղ բերել.—  
Գուցե ոսար չե՞ս, այլ մի հին ծանոթ,  
Ուրեմն բարով, բարով ես յեկել...

— Յես գյուղն եմ գնում.— Վաղուց ինձ ծանոթ,  
Կարոտ դաշտերին, գյուղերին բոլոր.—  
Ցեվ այդ բոլորը — բոլորն են ծանոթ,  
Յես հողն եմ սիրում—իմ հարազատ մոր:

— Սուրա իմ քամի, հորձանք տուր գետակ,  
Լցվել ե սիրտս—ցընծում ե հոգիս...  
Մաղվիր ուսերիս պայծառ արեղակ,  
Ինչպէս բերկրանքը հայրենի հողի:

## Դ Ա Շ Ը Ը

(Պեյզաժ)

Ահա դաշտը,  
Այն դաշտը,  
Լայն դաշտը.—  
Մաղկած ու բերրի...  
Զա՞ն, տես անցնում ե  
Դաշտի վրայով,  
Անձիր յերամը —  
Ճերմակ ամպերի...



## ՅԵՐԻ ԲԵՐՔՆ Ե ԱՌԱՑ

Դաշտերի վրա աշուն ե իջել,  
Խաղաղ ու հանդիսա և բերքով առատ,  
Մանուկներն ուրախ հայացքներով ջերմ  
Ճամբար յեն ընկնում դեպ այգի ու արտ:

Զեռնառատ մոր պես այգիներ բազում  
Կանչում են, ժպտում ամեն անցորդի.  
Բերքից կոացած ծառերն են նազում,  
Մըզի բուրմունքը փոելով չորս դին...

Ու աղջիկների յերգն ե զրնգում.  
Ամեն մի մարզում — ամեն ծառի տակ...  
Զինջ ու գալարուն հոսում ե Զանգուն,  
Յեվ ճայնակցում ե նրանց հետ կայտառ:

Դաշտերի վրա աշուն ե իջել  
Խաղաղ ու հանդիսա և բերքով առատ,  
Մանուկներն ուրախ հայացքներով ջերմ,  
Հանդից տուն կուն լիացած, ուրախ...

## ԿԳԱՍ ՎԱՐԱՐ...

Կգաս վարար դու մեր սարեն,  
Արձաթափայլ փրփուր հազած.  
Կերթաս ուրախ — փրփրալեն,  
Գյուղ ու հանդեր ծարավ թողած:

1854  
40

Ո՞, իմ գետակ, ջինջ ու պայծառ,  
Վոր կը յերգես ու կը իւղաս.—  
Տես իմ ձեռքով, յես քեզ համար,  
Գեպի դաշտը հուն կը անամ...

Ել դու ազատ չես դեգերի,  
Անդնդախոր մեր ձորերով,  
Վոր դաշտերը դառնան բերրի,  
Ամբարները ցորենի ծով...

Կգաս վարար դու մեր սարեն,  
Արձաթափայլ փրփուր հազած. —  
Կերթաս արագ — փրփրալեն,  
Գեպի հանդեր գյուղը ծարավ:



## ՍՏԱԼԻՆՑԱՆ ՊԱՏԱՆԻՆ

Կդա այցի այս գիշեր  
Զլարազուկ պատանին .

Յեվ վողջ դռներն հոյաշեն ,  
Նրա դիմաց կբացվեն :

Կմտնի ներս ժպտերես ,  
Բոլոր տեղեր նույն պահին .—  
Դեմքն առնական , գանգրագես ,  
Ստալինյան պատանին :

Բարեռում ե համարձակ ,  
Նա ժպտում ե բոլորին .—  
Դեղազանդուր ծամն արձակ ,  
Ծփում ե չեկ՝ ճակատին :

Աչքերը հուր—սրատես ,  
Նայվածքը ջինջ ու վսեմ .—  
Ստալինյան մտքի պես ,  
Խորաթափանց ու լուսե :

Փռում ե նա լիություն  
Սեղաններին մեր բոլոր .—  
Ահա արդեն մըտավ տուն ,  
Հաղթանակի տարին նոր :

## ԳԱՐՈՒԱՆ ՅԵՐԵԿՈ

Գարնան գիշեր և զով ու դուրեկան ,  
Նստել եմ անքուն սենյակում մենակ .—  
Իմ վառ հուշերը ինձ այցի յեկան ,  
Բերելով նոր սեր և անհուն բերկրանք :

Անթիվ են նրանք , չողջողուն , պայծառ ,  
Ինչպես աստղերը կապույտ յերկնքում ,  
Ու բոցավոված լողում եր անծայր  
Ամեն յերեկո իմ հոգու խորքում . . .

Յերբ կամաց—կամաց ցնդում են արդեն  
Ինչպես ամպերը Արագած սարի .—  
Դրսում բուրում են գարնան վարդերը  
Գլուխ հակվում փափուկ սնարին . . .

Փակում եմ աչքերս յերջանկությամբ լի ,  
Մորփիսի խաղաղ թեվերի ներքո . . .  
Ու յերազում եմ փառքն այն պոետի ,  
Վոր , ու շառաչի իր անհուն յերգով . . .



## ԿՈՒՎԵ ՅԵՐԹԸ

Դոսկեփրվուր առավոտը լուսացավ,  
Շարժվում ե մեր բանակն իր տեղից —  
Սվինները շողջողացին, բարձրացան,  
Մենք խնդությամբ հրացաններն ուսեցինք :

Արեգակը բարձրանում է հրաթև,  
Նժույգները վրնջում են ու խաղում,  
Ճամբի փոշին բարձրանում ե դեպ ամպեր,  
Ո՛, բերկրանք, ո՛ աննման խնդություն...

Լայնաբերան հրանոթները ծանրանիստ,  
Յերեսում են փոշու միջից միզամած —  
Հայացքները հառած հեռու անհանդիստ,  
Յեկ ահոելի մութ աչքերով ամպամած...

Նվազում ե մեր որկեստրը առնական  
Զարկում ե նա քո հողու նուրբ լարերին —  
Շարժվում ե ամեն մի նյարդ ու մկան,  
Տիրում ե քեզ զինվարական խիստ վոգին...

Զգում ես դու ինչ վոր մի ուժ անսպառ,—  
Տիրում են քեզ տարերքները կատաղի...  
Դեմդ անծիր անհատնելի մի անտառ  
Սանձն ե կրծում, — վրնջում ե տակիդ ձին...

Գնդի առջև մի քաջ հերոս—պարտիզան  
Սլանում ե ամպի նման թև առած —  
Հայացքն անշեղ, ինչպես հատու մի նիզակ  
Դեպի հեռու—տափաստանն արձակած...

Յեկ սրտի մեջ այդ զորավոր մեծ մարդու  
Ասես կռվի տարերքներ կան անհատակ —  
Ու կարդում ես ինքու անմահ մի յերդում,  
Վոր կկռվես մինչև վերջին հաղթանակ...



## ԼԵՎԻԿԻ ՑԵՐԱԶԸ

Մանկական փոքրիկ մի սիրուն դլուխ,  
Թեքվել ե խոհուն մի գըքի վրա.  
Կարդում ե արագ աչքերովն իր թուխ,  
Թե ինչպես մերոնք Պերեկոպն առան...

Կարդում ե հուզված... մտածում ե քեչ,  
Զգում ե նա խանդ, մանկական կորով.—  
Յելում ե վազում իր գըքի միջից,  
Կարմիր կոմանդիրն իրա զորքերով:

Քունը կախվում ե նրա աչքերից,  
Գլուխն ակամա հակվում ե բարձին:—  
...Ահա մի բանակ.—նրա առջևից  
Գընում ե ինքը.— տակին մի ալ ձի...



## ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԿՈԼԵՈԶԸ

Զեմ հիշում թե յերբ...  
Բայց մեր հեռավոր գյուղերից մեկում  
Յեղել ե ահա այսպիսի մի դեպք...

Ինչ վոր մի տերտեր մորուքը խուզած  
Դիմում ե տալիս, վոր կոլխոզ մտնի.  
— Դե ել ի՞նչ տերտեր... ասել ե հուզված,  
Վոչ միրուք ունեմ... վոչ ել Փարաջա...

Հեգնել են նրան կոլխոզնիկները,  
Ու ծիծաղել են անկեղծ զալեշտով.  
— Ա' իր եղ տեսակ վո՞նց կլինի, ա' տեր,  
Վոր դու ել մեղ պես ապրես քրտինքով...

Բա՛ աղոթքներդ ել ո՞ւր մընացին,  
Յել «անմահական դրախտն յեղեմի»...  
Քո տեր հիսուսը՝ «սուրբ ու յերկնածին»,  
Ապրուստիդ համար դու նըքան դիմի...

Լռել ե տերտերն ինչպես գող կատու,  
Մտքում ասելով «ոպասեք դեռ դուք...  
Յերբ վոր կստանաք հարվածն իմ հասու  
Այնժամ կտեսնեք, թե ով է հանդուգն...»

Դարձել եր տերտերն սառ իժի նման,  
Տաք տեղ եր ուզում վորպեսզի դործի.—  
Սրատես Աչքը նկատեց նրան...  
Յեվ զապեց իսկույն նենդավոր ոճին...

## Ա Տ Ե Լ ՈՒԹՅՈՒՆ

Կյանքն ստեղծել և մեծ վեհություններ,  
Հավերժապայծառ գաղաթների պես  
Իսկ դուք, վոճրագործ, ծախված հուղաներ,  
Ծով ատելությամբ նղովում եմ ձեզ...

Զըզվանք են բերում անուններդ գարչ,  
Դուք չարագործներ... Հայրենավաճառ...  
Գործերով ձեր մութ և ստորաքարչ,  
Դավեցիք անդամ լենինին հանձար:

Ինչպիսի արնոտ և դավադիր ձեռք,  
Վոր խզեց կյանքի թելը մեծ Գորկու.—  
Յեվ դավ եր ցանցում առաջնորդի դեմ,  
Ֆաշիստների հետ նենդ-արյունարրու...

Ձեզ թույլ չտվեց ժողովուրդը մեր,  
Ամենավստահ ձեռքով չեկիստի.—  
Յեվ ժողովրդի կամքով անվեհեր,  
Մտացաք դուք ձեր պատիժն արժանի...

Կանցնեն տարիներ և կանցնեն դարեր,

Կյանքը կծնի մի մեծ պատմաբան —

Նա խոր գարշանքով անունները ձեր

Կղամի դարձյալ անարդանքի ոյան . . .

Կընթանա առաջ — կյանքը անվախճան ,

Կանեն ձեր վրա նզովքի լեռներ —

Գալիք սերունդներ — մեզ անդավաճան

Անհուն զայրույթով կանվանեն ձեղ նեռ . . .

Կյանքն ստղեծել ե մեծ վեհություններ ,

Հավերժապայծառ գաղաթների պես . . .

Իսկ դուք վոճարագործ , ծախված հուղաներ

Ծով ատելությամբ նզովում եմ ձեզ . . .

Ա Յ Մ Ա Հ Ն Ե Ր



## ԶՈՐՍ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐ

(Համանուն պոեմի ճախերգ)

Մեղանից հետո, յերբ անցնեն դարել,  
(իսկ կոմունիզմը վաղուց կառուցված)։  
Այսորվա նըման առաջնորդը մեր,  
կլինի վեհ ու մեծ, — ամենքից սիրված։

Դարերի ծոցից վեհ ու սիրալիր,  
կըշողան պայծառ Զորս Լուսատուներ։  
Յե՛կ Մարքս և՛ Ենդելս, Լենին-Մտալին՝  
կոմունիզմի չորս ճարտարապետներ։

Սիրվելով անվերջ սերունդից սերունդ։  
Կհասնի նրանց փառքը աստղերին։  
Յեկ տիտանական նըրանց յերգերում  
կըղաս դարձյալ Իոսիֆ Մտալին։



## ՅԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

(Գրքած 1936 թ. նոյեմբերի 25-ի գիշերը  
Ստալինյան Սահմանադրության առքիվ)

1.

Նախամարդուց մինչ Լենինը հանձարեղ,  
Զգված ե վեր ճաճանչափալ մի ճամբար,—  
Մարդն առաջին, յերբ վոր պրկեց աղեղն իր,  
Ճոշաց սրտում ազատության ճառագայթ...  
Բայց նույն պահին աշխարհ յեկավ բռնություն,  
Ու կաշկանդեց և՛ կամք, և՛ միտք, և՛ լեզու,—  
Ուժը դարձավ արնոտ որենք— սուր հատու  
Ու միշտ ճոճվեց գլխի վերև աղքատի...  
Այլպես կովով ու պայքարով անդադար,  
Անց են կացել, քանի՛ տարի, քանի՛ դար.  
Բայց կա չդժա ու բռնություն աշխարհում,  
Յեվ կլինի, քանի կա մի բռնակալ...

2.

Բարախում ե ժամացույցը համընթաց,  
Մավզուեյից մի քիչ հեռու իմասին, —

Ո՛, պատմություն, լուսապայծառ եղդ բաց,  
Մի քիչ հետո ժամացույցը կը հնչի...  
Արտասովոր են բոլորն այս դիշեր,  
Անդամ դետերն և ովկիաններն անպարփակ  
Ո՛, դուք անմահ, ազատության յերգիչներ,  
Բաց ե արդեն ձեր յերազած դուռը փակ:  
Յեվ յերկիրն իմ լուսապայծուու, լուսերեսու,  
Վիշտն ու կարիք արհամարհող մայր ջահել.—  
Անցավ ահա ազատության դռնից ներս,  
Զեռքին պահած ազատության վառ ջահեր:

3.

Լիք լցված ե մեծ պալատը Կրեմլի.  
Իմ բազմազգի հայրենիքի մարդկանցով,  
Բռնկում ե փոթողիկը ծափերի,  
Յեվ չի լուռմ... Ահազնում ե վորպես ծով...  
Կայծակնացած վողջ յերկիրն ե հրճվում,  
Յեվ ամենուր ժողովութղներ տառապող,  
Իսկ սրտիցն իմ գեղի գրիչս ե թռչում,  
Վորպես ներբող հույզերն իմ այս տողառ տող:  
Յերջանկության և անմոռաց այդ պահին  
Բեմի վրա յերեվում ե նա հանկարծ...  
Տիեզերքն համայն շշնչում ե «Ստալին»:  
Հրճվելով և զգալով ակնածանք...

Բարձրանում ե հզոր ձեռքը մողա՛կան :  
 Հանդարտվում ե անզուսպ ծովը ծափերի ,—  
 Խոսում ե Նա .— Հաղթանակի վեհ հսկան ,  
 Յերջանկության նոր որենսդիրքը ձեռքին :  
 Խոսում ե Նա .— Կոմունիզմի Վարպետը ,  
 Լենինի պես գործով հատու ու անշեղ .  
 Յեկ բռնության քանի՛ ամրոց , քանի՛ բերդ ,  
 Իրենց հիմքից խարիսլվեցին այս գիշեր ...  
 Խոսում ե Նա .— Ազատության Մարդարեն ,  
 Շունչը նրա , սավառնում ե ամպրոպված ,  
 Ֆաշիստական մութ բանտերում անարեկ .—  
 Ճաքճաքեցին շղթաները բռնության ...

Խոսում ե Նա .— Ազատության վոգին վես ,  
 Կերտողն անմահ բոլշեվիկան ամրոցի ,—  
 Խոսքը նրա չողի նման սլացիկ .—  
 Ամեն սրտից ու սահմանից անցավ ներս :  
 Ահ զգացին բանականերն ամեն տեղ .  
 Յեկ կովեցին ու կոփեցին նոր շղթա ,  
 Վոր չփըրեն կապանքներն դուրս չգան ,  
 Ժողովուրդներն վորպես մի նոր Պրոմեթեյ ...  
 Բայց վառվում ե Ստալինյան հուրն անմար ,  
 Ճընշվածների բորբ սրտերում անհամար ,  
 Կըսորտակեն նրանք և' բանտ և' կապանք ,  
 Յեկ լույս ճամբով դեպ ապագա կընթանան :

Իսկ անպարփակ , անծայրածիր յերկիրն իմ ,  
 Անկնդրում ե առաջնորդին իմաստուն ,  
 Վոր այլ պահին կյանք ներշնչող ձայնով իր ,  
 Այցելում եր ամեն մի տուն ու ժարգու ...  
 Այնքան մայրեր չբժիշկից լաց յեղան ,—  
 Արտասվեցին ու ժպտացին սիրալիր ...  
 Այնքան մանուկ վակ լեզուներ բաց յեղան ,  
 Թոփովելով առաջին բառն «ՍՏԱԼԻՌՈՒ ...»  
 Փառք ե տալիս ութառնամյա մի ծերուկ ,  
 Աչքն հասելով իր թսոսնիկին նորախոս .  
 Բարձրախոսով դեռ նրա ձայնն ե ծորում ,  
 Վորպես կյանքի մշտաբորբոք վառ վարսու ...

Խոսում ե Նա .— Խոսքն հայրական — հարազատ ,  
 Արխություն ու յեռանդ ե ներշնչում ,—  
 Հենց այս պահին ուղիներով լուսառատ ,  
 Հաղար աերո ու շողեկառք ե թոչում ...  
 Իսկ հեռավոր ափի վրա հայրենի ,  
 Ուր զրոցը մեր ծածանվում ե վառապանձ ,  
 Աչքերը բորբ առյօնծակիր այրերի ,  
 Թրատեցին մութ գիշերն անթափանց ...  
 Դարձան հզոր , ել ավելի անառիկ ,  
 Հայրենիք իմ սահմաններդ սրբազան ,—  
 Թող գաղաղէն թշնամիներդ մահառիթ ,  
 Հավետ անսպարտ անմատչելի դու դարձար ...



## ՆՈՐ ՏԱՐԻՆ

Պոկում և նա վերջին թուղթն իր որացույցի  
Յեվ հառում և հայացքն իր ծով գեղի դարել—  
Դեմը ճամբան և ապադան արելածիր,  
Յերբ մտնում և մեծահամբալ ծերն ալեհեր:

Ներս և մտնում ճամբորդական իր տարազով,  
Ինչպես հոկտ փառապահված հերթաթային —  
Ու պարզում և շատ համարձակ ձեռքն իր հղոր,  
Բարե տալիս ու ժպտում և առաջնորդին:

Զարմանում և առաջնորդը շանկարծ մի ողահ,  
Բայց հիշում և իր ծանոթին —յեկվորին ծեր,  
Ընդունում և և զրուցում մտերմաբար —  
Ծով ու յերկինք փափացին իրար միջեվ:

Ժամացույցը մոտենում եր տասներկուուին,  
Յերբ վոր նրանք հրաժեշտ տվին վերջին անգամ —  
Յերկու տիտան, յերկու հոկտ, յերկու ծով սիրտ  
Հուզումնալից ու ալեկոծ յեկան իրար...

Մեկը նա յեր, մեր Առաջնորդն ու մեր հայրը,  
Իսկ ծերը մեծ՝ հոչակավոր մեր հին տարին.  
Նրանք հոկտ —տիեզերական յերկու մեծ այբ  
Հրաժեշտ տվին —մեկը արել, մյուսը յերկինք:

Ընթերցելով Ստալինյան որենագիրքը՝  
Յերը զնաց անմահություն՝ դեպի զարեր —  
Պատմության մեջ բացվեց մի նոր կապույտ  
յերկինք,  
Յեվ չողացին դեռ չծագած աստղ ու արեվ:

\*\*\*

Պոկում և նա որացույցի թուղթն առաջին  
Յեվ հառում և հայացքն իր ծով գեղի զարեր, —  
Սկսվում է հաղթանակի մեր նոր տարին —  
Յեվ բոլորից հաղթ ու հղոր՝ նա յէ արել...

1937



## ՍԴՈ ԽՌՍՔ

(Անաղարտ բոլենիիկ, կոմունիզմի կրակոս  
մարտիկ բնկ. Սերգո Օրջոնիկիձեյի անման  
հիշատակին)

Համակել ե խոր վիշտն իմ հոգին . . .

Չըկա այլես բոլչեվիկն անդուլ,  
Բայց շատ սերունդներ կվոգեվորի,  
Գործն ու անունն այն չքնաղ մարդու :

Նա, վոր գեռ յերեկ վեհությամբ անծիր  
Գերում եր մարդկանց զործով բոցաշունչ . . .  
Վորակես լեռների մի խիզախ արծիվ,  
Ընկալ անձնագոհ, ժամանակից շուտ :

Իր կյանքն անբասիր—անխոսոր ճամբար,—  
Պարզեց նա գեղի կոմունիզմը վեհ . . .  
Իսկ վարած մարտերն ինչպես շողուն ջահ  
Կըլուսալորեն ճամբան այն հավետ :

Վորակես Լենինյան փառապահ զինվոր,  
Տիտարը նրա միշտ կըմնա պարզ—  
Վորակես բոլչեվիկ—կդառնա սիմվոլ  
Յեվ պիտի հիշվի հար ու հանապաղ . . .

Նա հավերժափայլ մի աստղ դարձավ,  
Բոլչեվիկյան մեծ համաստեղության . . .  
Վորական զրոհի ժամանակն անծայր,  
Վորակես բոլչեվիկ կըշողա պայծառ . . .

Համակել ե խոր վիշտը բոլորին . . .  
Չըկա այլես բոլչեվիկն անդուլ . . .  
Դեռ չատ սերունդներ կըլողեվորի,  
Գործըն ու անունն այն չքնաղ մարդու :



## Դ Ա Խ Ե Լ

Առում եմ նեզ յեվ և զանք  
Միանենան զոռոզ ցար.—  
Յեվ և վարդոց յեվ և մանք  
Փիսի տեսնեմ անպատճառ:

Պ Ա Լ Ե Կ Ի Ը

Ա.

Լայն ստեղների անտառն ե իմ դեմ  
Յեվ ցուրտ հյուսիսի ձմեռը դաժան,  
Ու յես զգում եմ՝ բացվում ե արգեն  
Անհուն վոճիրը բռնակալության.  
Անտառն ու ցուրտը ծանոթ են թշում,  
Այստեղ եմ տեսել — հանդիպել մեկին  
Յեվ թվում ե, թե այս թավ անտառում  
Կտեսնեմ կրկին...

Բ.

Բայց յե՞րբ եմ տեսել, կամ թե ո՞վ ե նա,  
Յերգով մտերիմ, հողով անսասան.  
Ախ, ո՞վ ե այդպես, դերող ու անմահ,

Դեղերում այստեղ, անտառ իմ, տատ'...  
Յեվ ո՞վ ե այստեղ անընել մի որ,  
Գետ սառցակալած, դարավոր ու մեծ.  
Ո՞վ եր, վոր կրքոտ, ատելությամբ խոր,  
Բռնակալներին մահու չափ ատեց...

Գ.

Հենվում եմ հողնած մի դալար ծառի,  
Փչում ե քամին ցուրտ ու բքախառն.  
Տընքում ե սիրտո մի անհայտ ցավից  
Յեվ նեղ ե թվում աշխարհն ինձ մի պահ:  
Թռչում ե միտքո, սլանում զեպ հետ  
Պատմության արնոտ արահետներով,  
Յեվ յես տեսնում եմ մի ոռւս բռնակալ,  
Ավելի նենդստ — զազիր քան ներոն...

Դ.

Յերկիրը մուայլ, իշխողը՝ դաժան,  
Ամենուր փայտեր կախաղանների. Կ  
Հույղերով վճիտ ու հավերժական,  
Պոետն ե, ավա՛զ, գընում գուելի...  
Գընում ե անդո՛ւսող... ատելությամբ լի,  
Ընդդեմ բռնության, կարգերի դեմ հին,  
Լըպիրչ Դանտեսը — ձեռք նիկոլայի,  
Զըրկում ե կյանքից յերգի արեվին...

Ամակելը վերից սկսում էն ձյունել,  
Գալիս և հեռվից մեկը լրջախոչ,—  
Քընարը ծանր, չափազանց դռւնեղը  
Հայացքը առաւն, ովկիանի պիս խոր . . . —  
— Թողել եմ հետեւիս, ցա՛ր, բանահ'ր ու մա՛հ,  
Յեկ յերգել նրանց առելությամբ լի . . .  
Ահա յես . . . Անպարտ . . . Յեկ քընարս ժառ.—  
Հաղթեցի նրանց . . . զարձու Գուելից . . .

Յած առավ ուսից տավիզը հսկա,  
Զարկեց վողեցունչ ձոված լարերին . . .  
Կարող եր նա իր հանճարովն հստակ,  
Նո՛ր ձե, նո՛ր դույն տալ անդուսալ տարերքին:  
Նրատած թափծում եր՝ յերգիչն իմաստուն . . .  
Բոխում եր քնարից հեղեղը յերգի,  
Յերբ լոեց հանկարծ նրա յերգն աղդու,  
Զգացի, վոր լոկ յես եմ անտառում:



Ո՞վ ե գործել քեղ նասկի,  
Կի՞ն և յեղել, թե աղջիկ,  
Վո՞ր հեռավոր քաղաքից,  
Դու յեկել ես հասել ինձ . . .

Քո հատերում նրանցյուս,  
Վոր անթիվ են, բաղմաղան,  
Վողելույզված են յերգ ու հույզ,  
Մշխատանքով սրբազն . . .

Քեղ գործողը, իմ նասկի,  
Ինչպես յերգի նուրբ տողեր,  
Քո ծալքերում գեղեցիկ,  
Յեկ սեր, և կիրք ե թողել . . .

Յեկ յես զգում եմ ահով,  
Զերմությունը քո միջի.  
Այնքան հախուռն, այնքան խոր,  
Ինչպես յերգը Քուչակի . . .

Ո՞վ ե գործել քեղ նասկի,  
Կի՞ն և յեղել, թե աղջիկ—  
Ով եւ լինի, ինչ աղդից,  
Հարազատ ե—ծանոթ ինձ:

ՊՈԵՏԻ ՄԱՀԸ

(Մայակովսկուն)

Փչում ե ահա մահաշունչ քամին  
Ու արշավում ե կողմերն աշխարհի .—  
— Այն ո՞վ եր փշրեց դեկն իր նալի ,  
Ո՞վ եր , վոր կտրեց լարն իր քնարի . . .

Յերգերովն իր մեծ—թափով վիթխարի ,  
Պոետն այն հսկա—լուց շյուսիում ,  
Նա , վոր սլայքարի յերգեր եր չյուսում ,  
Նա վոր տրուբատուր դարձավ մեր դարի :

— Պոետ , դու անցա՛ր — զնացիր անդարձ ,  
Կյանքիդ նավակը խմելով քարին . . .  
Բայց միշտ կհնչի անունդ բարձր ,  
Բանի ապրում են քո յերգերը դանձ . . .

Փչում ե ահա մահաշունչ քամին  
Ու արշավում ե կողմերն աշխարհի .—  
Զըկան բեկորներն խորտակված նավի ,  
Բայց ձայնն ե լսվում այն մեծ քնարի . . .

ՀՈՂՄԱԿՍՈՒՆ ԿԱՂՆԻՆ

(Հակոբ Հակոբյանին)

1.

Քարձրաբերձ լեռան կատարին անծիր ,  
Ամպերն են անվերջ ծորում անվախճան :  
Յեկ այնուեղ միայն խվախ արծիվն եր\*)  
Թալառում հաճախ . . .

Նստում եր հալարտ , բարձր ժայռերին ,  
Չաղերն անհանդիստ իրա մոտ առած՝  
Նայում եր ներքեւ—սնկուչո դայլերին ,  
Զայրույթով լցված . . .

Ու մեկ ել տեսար գիշատիչ բազեն  
Հալածեց իսկույն մի թռչունի խեղձ .  
Նասպաստակը լուռ , բնում ավազե ,  
Յեղավ ընչահեղձ . . .

Բարձրացավ աղմուկ ահավոր ձորում ,  
Լըսվեցին նըսաղ ճիչեր աղերսի .  
Անշուշտ՝ նենդալոր աղվեսն եր փորձում  
Տիրանալ վորսին . . .

\*) Անին

Նայում ե ներքեւ արծիվն հարցական,  
Հետո արձակում մահասարսուռ ճիչ,  
Լրավում ե ձորում խուլ արձադանդը,  
Խոռոշ ամեն ինչ...

2.

Ահա այն լեռան՝ բարձր քարափին,  
Կավահողի մեջ մի կաղնի աճեց —  
Շոյեց զուրգուրեց, լույս արվեց արփին,  
Ծառը կանաչեց...

Սիրում եր ահեղ զուռոցն ամպերի,  
Յեկ հեղեղների տարափն հորդաբուխ —  
Հսում եր խիզախ կանչն Արծըլի  
Առափոս կանուխ...

Գարնան արելի, անձրեվի ներքո,  
Աճում եր ծառը — բարձրանում պայծառ,  
Բայց լցովում եյին դեպ նա դայրութով  
Ցեղ փուշ, և մացառ...

Յերբ վրա հասան որերը մըռայլ,  
Լեռներում չաչեց մի զաժան քամի,  
Յերկնքում ցոլաց և շանթ, և կայծակ,  
Ծառեր ընկան ցած:

Բայց մընաց կանդուն կաղնին անվհատ,  
Շաչող հողմերի ու ցրտի դիմաց.  
Ու ել ավելի ամեն մի արմատ  
Դեսլի խոր դընաց...

Յերկնել եր նրան մայր հողը բերրի,  
Վորսէս մի պարզէ բընության բարիք.  
Զեր կարող նըրան ներքեւ դորի  
Վոչ մի արհապիրք...

Ու հզորացավ կաղնին անխորտակ,  
Աճեց ու յելավ նա հողմակայուն,  
Զուր եյին հողմերը միշտ չարազուշակ  
Նըրա շուրջը վայում...

\*\*\*

Հիմա նա չկա — Անսասան կաղնին,  
Մարտաշունչ յերդի պայծառ վետերան,  
Բայց զարեր կապրեն — յերդեք չեն խամրի  
Յերդերը նըրա...



ՀԱՂԹԱՆԱԿԻ ՅԵՐԳԵՐ

ԿՈՎԻ ՅԵՐԳԸ

ԳՐԵՇ ,  
ԳՐԵՇ ,  
ԳՐԵՇ ,  
ՎՈՐ յերգերով  
ԳՐԵՇ զնամ ,  
ՅԵՐԲ վոր հանկարծ  
ԿՐԵՒՋ լինի ,  
ԱԺԵՆԻց շուտ ,  
ԽՐՈՒՄ զընամ . . .

ԳՐԵՇ ,  
ԳՐԵՇ ,  
ԳՐԵՇ ,  
ՎՈՐ յերգերով  
ՍՐՄԵՐ կըսեմ ,  
ՅԵՐԲ վոր վաղը  
ԿՐՄԵՎ լինի ,  
ՅԵՌ զրչի տեղ  
ԶԵՆՔ ոլիս կրեմ . . .

ԳՐԵՇ ,  
ԳՐԵՇ ,

Վաղվա համար  
Զենքեր կում...

Կըսի'վ,  
Կըսի'վ,  
Կըսի'վ,  
Բաղմադաշտն և  
Աչքերիս գեմ--  
Յեվ թրշնամին  
Զե դաղարի,  
Զե գա ցրիվ,  
Մինչև նըսան  
Չըշախախախնք...

Կըսի'վ,  
Կըսի'վ,  
Բորբոքում են  
Այն մեծ հրդեհն,  
Արդե՛ն,  
Արդե՛ն,  
Դալիս են մեր դեմ  
Ո՛, դեպի դիրքեր,  
Դեպի հրազեն:

Յելե՛ք,  
Յելե՛ք,  
Յելե՛ք,

Մեր գեմ դիրքեր  
Ու իրամատ,--  
Թշնամու հոծ,  
Զինված դնդեր...

Յելե՛ք,  
Յելե՛ք,  
Վոր թւշնամու  
Մահը բերենք...

Գրո՛ւ,  
Գրո՛ւ,  
Գրո՛ւ,  
Դեպի դիրքերն  
Ու թշնամին.  
Փոթորկում ե  
Կըսիփ քամին...

Գրո՛ւ,  
Գրո՛ւ,  
Յեվ յերանի  
Այն զինվորին,  
Վոր մեծ կըսովում,  
Վերջին սրով  
Կերթա գրո՛ւ,  
Սիրտը վորպես  
Հաղթանակի  
Կարմիր դրոշ...

\*\*\*

Գրե՛մ,  
Գրե՛մ,  
Գրե՛մ,  
Վոր յերդերով  
Գրուչ զընամ,  
Յերբ վոր վազր  
Կրոիվ լինի,  
Ամենից չուտ,  
Խրուխու զընամ:



Մ Ա Հ Ա Մ Ե Պ Զ

1.

Ծանր հիվանդ եր հացթուի Դումաշը,  
Վաղուց եր յեղել խեղձը հալումաշ...

— Աղջի Արմաղա՞ն, — կանչեց նա հարսին, —  
Ի՞նչ որ ե եսոր, քանի՞ն և ոմսի:

Զե՞ս լսում աղջի... Անիրոտ, անջիպար...  
— Ելի՞ յես հարցնում... ի՞նչ կա տառի ջան:

— Բա չե՞ս ամաչում... զեռ եղքան ջահիլ,  
Զես կարա որը մըտքումդ պահէլ:

— Գիտեյի տառի, — հարսն արդարացավ,  
Լեղիս վրա յեր... համա մոռացա:

— Դե լա՛վ, ծարավ եմ, բեր ինձ մի քիչ ջուր,  
Յել ծեր դլուխը բարձին և իջնում...

— Ոխա՞յ, հովացա... պաղ ջուր եր, բալոս,  
Ճյուղեր արձակես—կանաչ ծառ դառնաս...

Դրեց նա դետին դավը լի ջըով,  
Աւ նայեց հարսին տիսուր աչքերով:

— Մո՛մ արի բարս, նոտի՛ր ինձ մոտիկ  
Յել մի հեռանա ես որ իմ մոտից...

Նստում ե հարսը կեսրոջ մոտ տիսուր,  
Նայում ե նրան զարմացած ու լուս:

2

— Եռղը ներս ընկավ, որը կեսոր և,  
Արմաղա՛ն, բալա, կանցնի եսոր ել...

Դըսում արե ե, լիառատ աշուն,  
Ախ, ցալին ե վերջին որերս մաշում:

Ապրի՛ր միշտ ուրախ, յեղի՛ր ինձ հիշող,  
Վաղն ել չեմ տեսնի ամպ, արե ու չող...

Եսոր հասաշանքով նայեց դեպի դուրս,  
Հայտնելով բաղձանք և ապրելու հույս:

— Սրտիս մեջ ունեմ միայն մի կարոտ,  
Ապրեմ—սաղ մընամ, մինչ այն առափոտ...

Դուռ-դրկիցի չետ ընտրության դընամ,  
Մեր Ստալինին յես իմ ձայնը տաժ:

Ո՞ւմ մըտքով կանցներ եսպիսի մի բախտ,  
Վոր կյանքը դառնա իսկական դրախտ...

Հացթուխ եմ յեղել յերեսուն տարի—  
Ոտարի գըռան կյանքս քաշ տըլի...

Գիշեր բանեցի, ցերեկ բանեցի,  
Բայց աչքս կարոտ մընաց միշտ հացի...

Ե՛, ել ի՞նչ ասեմ... ի՞նչ անեմ վորդյակ,  
Թող հինը մընա անժամ քարի տակ...

3

— Արմաղա՛ն, բալա, տեղս տար չվաք.  
Ի՞նչո՞ւ յես տիսուր... ի՞նչո՞ւ յես չըլար...

Հարսը կատարեց կեսրոջ բաղձանքը.  
Զով շըլաքումն ե պառավը պառկած:

— Պըտույտ ե դալիս տան վրա բաղեն...  
Հենց ես բոլորը դիտնաս յերադ ե...

Հիվանդ չեմ կարծես... զգում եմ ինձ լավ...  
Ամա՛ն, ուրուրը ու ձաղիս տարավ...

Լցվեցին գոհար աչքերը հարսի.  
Վա՛յ քոռանամ յես, եդ ի՞նչ եր տոիր...

Ախր ի՞նչ յերազ... ի՞նչ ուրսուր, ի՞նչ ձազ,  
Ամոլի շըվաք եր մեր բակով անցավ...

Անցան վայրկյաններ. պառկած երնա լուս...  
— Ուշացանք աղջի... լս դու չե՞ս դալու...

Հրեն աղջիկներ հանղը դընացին,  
Հա, յես եւ պրծա... շորս լվացի...

Կանչեց նա այսպես ու լոեց հանկարծ—  
Հանդավ նրա մեջ կյանքի վերջին կայծ:



### ԱՆԱՍԵՎԱ

Անասե՛վա,  
Անասե՛վա,  
Աղջիկ իմ,  
Բորբոքվել ե  
Սրովս հուրը...  
Հրաման...

Անասե՛վա,  
Անասե՛վա,  
Կապուտաչյա  
իմ աղջիկ.  
Եսսքն անմեռ ե  
Յերդչի...

Քո աչքերի մեջ կառույց,  
Կա մի անուշ պարզություն.—  
Ո, գու յերդի հրապույր,  
Դու հարազատ վորպես քույր...

Քեզ չի հասնի Շաղանեն,  
Անասեվա գեղեցիկ,  
Յեզ այս յերդը քեզ համար,  
Վորպես ընծա գրեցի:

— Ստեղների պես անծիր,  
Անշատակ է կարուն իմ՝  
Բաժանումից քիչ առաջ,  
Գանդատվեցիր ու լացիր :

Յեկ քո հարստ ճակատին,  
Յես կարդացի լուս խոհեր . . .  
Յերբ արցունքի մի կաթիւ  
Դեմքեցդ վար գլորվեց . . .

Անասե՛լա,  
Անասե՛լա,  
Սիրելիս,  
Միշտ հարազատ ու բաց են  
Ճամբաները մեր յերկրի .  
Քեզ մոռացված չկարծես,  
Կհանդիալենք մենք ելի . . .

Ուր ել լինենք, վոր անկյուն,  
Մի հայրենիք ունենք մենք —  
Սիրենք նրան լիարյուն,  
Սիրուց առաջ՝ պարտքը մեր . . .

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի բարձրաբերձ ձյունապակ լեռներին,  
Ծիրանադույն ծովի պես բացվեց մի նոր առավոտ  
Յերջանկության լրարեր — Ստալինյան ազակնին,  
Թերին տվեց ու իջավ Արագածի կատարին,  
Նայեց շուրջը նա ուրախ, սիրակարսու զեղդեւաց . . .  
Սար ու ձորեր արթնացան, լոեցին կանչը նրա.  
Կացին ուներ մի ծրար — Մոսկվայից եր ըերած —  
Ժողովրդին մեր տվեց և նա ուրախ հետ գնաց :  
Գետերն առան մի նոր թափ, ջաւրն աղբյուրի զրնկաց,  
Խնդությունը ծալվեց ամենուրեք լուսավեժ,  
Յեկալ ուրախ կյանքը մեր, գտավ դռներ չեն ու բաց  
Յեկ ավետեց բոլցրին յերջանկությունը հավերժ :



## ՅԵՐԳՈՒՄ ԵՆ ՄՈՒՐՃԵՐԸ

1

Մեր չուրջը կոխվ ե ,

Մեր չուրջը վերելը .

Պատերն արագ բարձրանում են վեր ,

Զնդում են ուրախ հմտութ մուրճերը

Յերևանում մեր ...

Յերդում ե քլունդը ,

Զայնակցում բահը .

Երանց յերդի հետ պատն ե բարձրանում ,

Շարում ուրախ վարպետ Ոհանը ,

Քաղցր ծիծաղում ...

— Այ տղա՛ , քար րեր ,

Մնացի սլարապ .

(Վարպետ Ոհանը նայում ե ներքեւ) ,

— Մեջքիդ հարաքյաթ , այ յոլդաշ Հասան ,

... ինչքա՞ն ես տաշել ...

Նայում ե ներքեւից

Ժրաշան քարտացը ,

Զավում ե որը—նայում արելն ,

Ուրախ ժպիսապ , ասում ե «ղարդաշ» ,

Յոյց տալով տաշած կարմիր քարերին :

Ուզում եր ասել

Ոհանին վարպետ .—

— Շարից այ ախողեր , մնացել ես հետ ,

Բայց հանկարծ աչքը առավ Սուսանին ,

Եվելի թափով մուրճն իջավ քարին ...

Փափում ե Սուսանը

(Խոսում թուրքերեն) .

— Արի ճաջէ կեր , կսառի Հասան :

— Թշերը նուշ են ... Մազերը սուրմա ,—

Խոսում ե քարտաշ մի ջահել տղա ...

Սուսանը

Հասանի կինն ե .

Այրող աչքերով , ջահել ու սիրուն ,

Նա միշտ Հասանին խրախուսում ե ,

— Իդիթ ես Հասան ... իմ ջան , իմ ջիվան :

Յեռում ե յեռանդով ,

Հասանը

Ասես կերտում ե դեմքը Սուսանի ,

Իջնում ե մուրճը ծիծաղկոտ հանդով ,

Վարդաղույն քարին ...

Կապոցը

Դնում ե սե քարին ,

Հասանի սրտում վառվում ե բոցը :

— Հասան գնում եմ , իրիկուն շուտ արի .—

Քայլերն ուղղելով դեպի փողոցը ...

Նա միշտ տաշում ե  
Կարմիր քարերը.  
Քարտաշ չասանն ուրախ ու ջահել,  
Կարծես չի տաշել, այլ քանդակել ե.  
Մեր վարդանման տուփաքարերը...

Շարում ե ու չարում,  
Զանառեր ՈՀԱՆԸ.—  
Ծիծաղկոտ գեմքով պատն ե բարձրանում :  
Վերելքի թափի խանդոտ դարուն ե : .  
Կարծես չի չարում, այլ նկարում ե ...

\*\*\*

Մեր չուրջը կռիվ ե,  
Մեր չուրջը վերելք:  
Պատերն արագ բարձրանում են վեր,  
Զնդում են ուրախ հմուտ մուրճերը  
Յերեանում մեր ...



## ՄԻ ԲՈՒՌՈ ՑՈՐԵՆԻ ՑԵՎ ՄՈՒՐԱԽՅԻ ՍԱՍԻՆ

Մարիամ տատիկն իր բակում,  
Աշնան վուել եր ցորեն . . .  
Ինչ վոր յերգ եր մոմուում  
Յեզ հիշում եր հին որեր . . .

«Բոսն տարի չարունակ  
Խալխին չոր եմ լվացել,  
Բոսն տարին բոլորակ,  
Վոր տանջվել եմ ու լացել . . .»

Հենց այդ պահին, քրտնկոխ  
«Հայր» Զարդանդը ներս վաղեց . . .  
Վորպես տխուր յերեկո,  
Շուրջառի փեշը պարզեց :

«Դու արդար ես, դու բարի,  
Հոգուգ համար, քույր Մարիամ . . .  
Վարձ չես տվել ես տարի.  
Յորե՞ն կտաս, թէ՞ դարի . . .» :

«Վոչ զարի կու, զոչ ցարեն,  
Սա տշխար ե կոլիխողի,  
Թեկուզ ձաղար մոռթ հորեմ,  
Եւ քեզ բաժին չեմ հանի»:

Տերտերը լուս յելավ դուրս,  
Տատիկը զոհ քրթմնիթաց —  
«Այծու եւ ունի ուե մաւրուս,  
Եւլքի արի, տերտեր «Ճան»»:

Մարիամ տատիկն իր բանում  
Աշնան վոել եր ցորեն,  
Լուս խորհում եր—սպասում  
Եւ ավելի լավ որեր...

1935

## ԶԱՏԿԻ ԼՈՒՅՍ ԳԻՇԵՐ

Նորանջում են, զողանջում են զանդերը,  
Զողանջում են հին զանդերը ծեր ժամի:  
Ժողովրդին ժամ ե կանչում տերտերը,  
«Թու արդար ե և զրախափին արժանի»:

Յեկեղեցին կը ծկը կել ե, ծվարել,  
Կես գիշերից ճըինի վրա դուռը բաց,  
Բահանան լուս բեմի վրա ըլվարել.  
Եկրս ե հոսում զարնան ողը թարմ ու դառջ:

Ներս են մտնում աղավնիներն վերեից,  
Միրաբանում ու գուրզուրվում թե-թել  
Ու նըստում ե ամպի նըման մի թախիծ  
Դեմքի վրա տըխուր ու լուս տերտերի...

Նա կանչում ե իր հընդառակ ժամկոչին.  
«Ճանդերը տուր, չըմուանաս քո դերը...  
Կերջին անգամ ժողովրդին ժամ կոչիր,  
Մահ կընդունի... կամ հաղթանակ քո տերը»:

Խոր հավատով զանդերը դիւ կըզարկես,  
իսկ յես աղօթք ու պատարագ կանեմ ջերմ .—  
Թող չըլուն սուրբ զանդերի զողանջներ,  
Մինչև վոր յես պատարագը վերջացնեմ»:

Ղողանջեցին ու կանչեցին զանդերը,  
Վերջին շընչով-մահվան տենդով բռնված,—  
Միայն մի շուն լիզեց իրա թաթերը,  
Ցըցեց դունչը, զանդերի հետ խուլ վոռնաց :

Լուսանում ե: Ժամը տիսուր ու դատարկ,  
Դուրս ե գալիս յեկեղեցուց նա թափով:  
Ո՞ւր ե դընում, շուրջառն հագին, ուխին թագ,  
Զե՞ վոր արդեն վոչ կնունք կա, վոչ թափուր

Նա գընում եր, վորակս սև ամպ, սև կըսկիծ,  
Լսելով թույլ դողանջներ հետ զանդի.  
Նա գնում եր և անիծում մոլեգին,  
Վոր յերկինքը, քամի, կարկուտ, հուր թափի:

Նա անեծքով, հայհոյանքով հեռացավ  
«Իրա» գյուղից, ժողովրդից անհավատ.—  
Լցված թունոտ նենդ վոստիի չարությամք . . .  
Ու այն որից այլիս հետ չլարձաւ . . .



## ԼԻՐԻԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՅ

(Սրբելի Հ. Հ. ին)

Քար ես տաշում վարպետ,  
Քար ես կրում ընկեր,  
Վոր շնչքն այդ հոկա, շուտով յելնի վեր .  
Աճում են պատերը,  
Բարձրանում արդեն . . .

Քրտինքով կաթեց՝ ցած ընկավ քարին,  
Վոր զործդ ածի րեզմնափոր զառնա.  
Մուրճիդ կորովից տուր իմ քնարին,  
Վոր քո պատի պես յերզս բարձրանա . . .

— Տաշեցիր այդ քարը,  
Վերջացավ արդեն,  
Ինչո՞ւ յես այդքան  
Մասուդում յերկար :  
Զարմացած ինձ նայեց վարպետը . . .

— Այս քարը, բարեկա՛մ,  
Դարերի գործ ե . . .  
Դա պետք ե ապրի՛,  
Դա պետք ե մնա՛,—  
Սիրառ չի ների,

Վոր գործը ձեռքիս,  
Մնա քիչ թերի...

Սերունդներ կղան մեղանից հետո,  
Քո գործով պետք է նրանց հմայես,  
Պիտ լինես յերկաթ, պիտ դառնաս բնուան,  
Վոր քեզնից հետո, զործու ճանաչեն:

Նա այսքան ասաց ու ժողովաց խոհուն,  
Հայացքը վորպես բանկվող լուսայդ,  
Խոկ յես այս համեստ տողերն եմ գրում  
Յո մասին, վարպետ—բազմաբեղուն մարդ,

Վոր ունես խոհեր, հույզեր բազմերանդ՝  
Վեհության հասած, վաստակը արդար  
Տալիս ես քարին և՛ կյանք և՛ յերանդ,  
Յեկ անմահության չնորհը անդարձ...

Թող պոետական իմ հոգին գերվող,  
Խոնարհի ընդմիշտ քանքարիդ առաջ:—  
Վերջ տանք զրույցին այս փոքրիկ յերգով  
Վորպես քեզ ներբող...

## ՓԱՎԲԻԿ ԲԱՆԱՏԵՂԺՈՒԹՅՈՒՆԵՐ

ՅԵՐԳԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆ ՅԵՎ  
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՄԱՍԻՆ

Յեղա յես կրկին մեր հանգստի տան,  
Յել հանգստացա խաղաղ ու սիրով.  
Թող Ծաղկաձորում ինձ վոչինչ չտան,  
Շրջեմ անցկենամ կանաչ ձորերով...  
Ա՛յս, ի՞նչքա՞ն, ի՞նչքա՞ն յես թափառեցի  
Զով անտառներում թովիչ ու կանաչ.—  
Ճոխ սեղանի պես սիրտ բացեցի,  
Յերգեր ձոնեցի՝ լնության, կանանց:  
Հաճախ և սառել նախաճաշը իմ  
Ոհուանի վրա անսպառ ու ճոխ  
Վորտե՞ղ եմ յեղել արդյոք այդ պահին  
Յեվ տարված ինչո՞վ...  
Ինչքան յեկել եմ այստեղ հանգստի,  
Զգացել եմ սեր... և անհուն կարոտ  
Շողչողացել ե յերգը իմ սրտի,  
Ինչպես մայիսյան պայծառ առավոտ  
Ո՛, գեղածիծաղ չքնաղ Ծաղկաձոր,  
Տառ ինձ նոր լեզու և անթիվ բառեր.—  
Անվերջ յերգելով զարձյալ չեմ կարող,  
Քեզեցկությունդ յերգով սպառել... .

\*\*\*

Փառք հայրենիքին մեր անեղքական,  
փոստ մեծանուն— պողպատն մարդուն,  
Վոր ստեղծել է յերջանիկ կյանք,  
Մեծ հայրենիքի ամեն անկյունում . . .

1937

### Կ Ա Ռ Ո Ւ Յ Ո Ղ Ն Ե Ր

Քանդում եք, քանդում եք հները  
Չել նորն եք կառուցում ամենուր .  
Ա՛խ, տվեք սիրելի լնկերներ  
Մի քլունդ ինձ ամուր . . .

Քանդում եք, քանդում եք հները,  
Չելնում են նոր շենքերն ու աճում .  
Ախ, ինչո՞ւ պոհտն իր գիրքերը  
Չեղ պես չի նվաճում . . .

1935



Ա Շ Ո Ւ Ն

Վոսկեվարս ու ժպտերես  
Հյուր և գալիս մի աղջիկ,  
Թակում դուռը մանում ներս  
Կանաչապարդ մեր բաղչեց . . .

Մըտնում և ներս հերարձակ,  
Եռւրբ շորերով թափիշե,  
Պարում յերշում բարձրածոյն,  
Առավոտից մինչ դիշեր :

Հետո հանկարծ չըքանում,  
Ենեյանում վորպես չող—  
Արդասավոր են դառնում  
Մեր յերկրի ջուրն ու հող :

Կարմրում են ու կախվում  
Վողկույզները խաղողի  
Ու խընդությամբ ներծըծում  
Բաղցրությունը սև հողի . . .

1935



Ո Դ Ա Ն Ա Վ

Լուսաբացին դեռ արեվը չըծագած,  
Հորիզոնը հըմնդյունով կրյոցի,  
Վարպես բաղե—մըրկաթե մոլեղնած,  
Եա քաղաքից դեղի դյուզեր կարշավի:

Կըդղրդա, կշառաչի ու կրդա,  
Հողմակալած ամպերի հետ սուրալով,  
Մերթ բարձրանում, հետո հանկարծ իջնում ցած,  
Յերբ անցնում և ձյունաղագաթ մեր սարով :

Թեվին կըտա, թոչունի պես կըսուրա,  
Լուսապայծառ ու արեսոտ յերկնքով.—  
Բւ կարսառի յես հայացքս վեր հառած  
Լուռ նայում եմ ուրախ կանդնած դռան քով :

1934



Կ Ա Ր Ո Տ

Բացեք գոները, բացեք պատուհան,  
Մի, կյանքն ինձ այսոր այնպես ե թովում...  
Զմեռն լրուր ե կծկվել դռան,  
Գալունն և մեջս խանդավառ հեվում:

Ամեն ինչ այսոր կոխվել ե աչքիս,  
Փոխվել ես ի՛ զու... փոխվել եմ և յես  
Թող հնչին խանդոս տողերն իմ յերգի,  
Վոր յերգեմ փառքի վերեւքի յերկիր...

Բացեք գոները, բացեք պատուհան,  
Մըսումս այս գիշեր յերգ ու հրդեհ կա...  
Յերգ իմ, կարոտ իմ, սեր իմ հուրհրտ,  
Ո՛, ինչ զեղեցիկ ե լով ե ներկան...

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր

Գ. Ի 6

Յերկու մանկութ ընկերներ՝  
Յես ու ջահել մի տղա.  
Յես շուտ հուղլող—անհամբեր,  
Խոհուն ու լուս ծով ե նա...

Միշտ միասին—անբաժան,  
Ընթանում ենք կյանքի հետ...  
Յերկու ընկեր ժրաջան,  
Գարնան յերկու վարար գետ...



## ՏՈՒՆ-ԳՐԱԴԱՐԱՆ

(Ցե Հին)

1.

Յերկու սիրուն կից սենյակներ,  
Մշտամաքուր ու լուսառատ...  
Յել այսուեղ և ապրում խոհեմ  
Մի կոմյերիտ—ջի՞նջ, անարա'տ:

Յերեկ արեվին և միշտ խաղում,  
Սենյակներում այն ձյունափայլ,  
Իսկ դիշերներ լամպը մաղում  
Ելքաբական լույսը շռայլ:

Սենյակներում ջի՞նջ ու մաքուր,  
Հանձարներն են ապրում անմահ.  
Նբա՛նք, ովքեր վոր ամենուր  
Միշտ մեղ հետ են և անբաժան:

2

Ազատության Ծիծենակից\*)  
Մինչ Սոալին—անողարտ Հոկան  
Կժպատան լուռ ամեն կողմից  
Կնային քե՛ղ պարզ ու հստակ:

Փոթորկահույդ կտեսնես դու  
Մարատին մա՛ռ... խստահայց...  
Սրտում կովի պայքարն անդուլ  
Հայացքը դեպ լենին հառած:

Կտեսնես դու պոետներին  
Ազատության—լույսի կարուտ,  
Վոր յերդեցին ու տենչացին...  
Բայց չտեսան լույս առավոտ:

Կտեսնես դու ուազմազաշոներ,  
Յեկ բանակներ իրարու դեմ—  
Սպարտակյան կուռ վաշտերից  
Մինչև լենին ու Հոկտեմբեր

\*\*\*

Հարազատս ե կոմյերիտն այն,  
Կամքով արի ու անվարան.  
Պետք ե լինել նրա նման,  
Ունենալ տում-գրադարան:



\*) Սպարտակ

## ՄԱՐՏԻ ՈՒԹՅ

(Սիրելի Մ-ից)

Մարտի ութն ե , բարեկամ,  
ի՞նչ եմ տալու քեզ ընծա . . .  
Դիմու լուսե մի ճամբա —  
Կոմունիզմն ե այն պայծառ :

Մեր որերը լուսածիր ,  
Յերջանկությամբ վողողված ,  
Յեզ դու հպարտ ընթացիր  
Դեպի կըսիվ—այլպարաց :

## Ք Ո Խ Յ Ր Ե Ր

(Բմ սիրելի բայրերին)

Թող նընջեն հանդիսատ վոսկորներդ , Աղե ,  
Շատ լավ են հիմա կյատիքն ու նաղեն . . .

Զի ծեծում նըրանց խորթ մայրը՝ Նիդար . . .  
Ա՛յս լինչո՞ւ յեր նա այդքան անջիկար . . .

Զի վախչում տանից Վահան—խըռովկան ,  
Բրեկ չի դայիս ոտարի դըռան . . .

Քույրերն իմ այն խեղձ՝ ունեն տուն ու տեղ ,  
Դարձել են մայրեր՝ ժիր ու աշաղեղ :

Մեկը քաղաքում , իսկ մյուսը դյուզում ,  
Աղրում են ուրախ և իրար հիշում . . .

Անշան որերն այն , յերբ մերկ եյինք , վորբ ,  
Վոչ միայն մայրը , աշխարհն ել եր խորթ . . .

Թող նընջեն հանդիսատ վոսկորներդ , Աղե ,  
Եոր մարդ են հիմա— կյատիքն ու նաղեն . . .

ՅԵՐԲ ՎՈՐ ԳԱՐՈՒԽՆ ԳԱ...

Յերբ վոր գարուն դա ու հալվի ձյունը,  
Կըծաղկի հըսկա անտառն Հյուսիսի,  
Իրաղատմի սոսին կանաչ յեղեվնուն,  
Յել հուր և անեղծ մի սիրու մասին...

— Արեվի կեպիչ համբույրն յերեսին,  
Հարավից մեղ մոտ յեկավ մի տըզա.  
Սիրեց վուկեծամ միւ պոետեսի.  
Յել յերենքի սկես տչքերը նըրա...

Լուս կըսրմարմա յեղեվնին կանաչ.  
Ախ, այդ զրույցն ե — կյանքն ե ծառերի...  
Կարծես փովում ե անտառն իմ առաջ,  
Յել դերող մի ձայն կանչում ե «արի»...

Ինչքան դարուն դա ու հալվի ձյունը,  
Կըհիշեմ յես միշտ անտառն Հյուսիսի...  
Յեվ զբողների այն համեստ տունը,  
Բւր վոր սիրեցի մի պոետեսի...

ԱՌԱՋԻՆ ԾԻԼ

Վաղջույն քեզ գարուն, կյանքի հուն վարար,  
Յել քեզ՝ անհանդիսա, վեր խոյացող ծիլ,  
Վոր հենց այս պահին, բոլորից առաջ  
Կովով աճեցիր...

## Հ Ա Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի Կ Բ

Նայեք այս թուիս փոքրիկ մանկան,  
Այդ չար ճուտին Հոկտեմբերի —  
Նկարել ե մուրճ ու մանդաղ,  
Յեվ պատկերը մեծ լենինի...

## ՍՏԵՐԻՄ ԽՈՍՔԵՐ

(Զարիկին)

Դու ոտար չես, մտերիմ  
Յեվ հարազատ վորագես քույր,  
Ու միշտ առես տեսնում եմ,  
Քույր, արեգոտ դեմքը քու...



Ա Յ Ա Գ Ի Լ

Ի Ն Զ Ք Ա Ն

Ինչքան տեսնեմ յես անտառ,  
Յեզ ջրերը խշիշան,  
Քեզ եւ վորպես կանաչ ծառ  
Միշտ հիշում եմ, աղջի՛ ջան...



Մեր զորանոցի բարձր կտուրին,  
Յերեկ առավոտ իջալ արագիլ. —  
Կանգնեց մի վոտքի, պարզեց թեփերն իր  
Ու նայից ներքեւ չինչ հայացքով բիլ...

Ալիքների պես ծփացին յեւան,  
Աշնան ամպերը ու ու կտուաղի,  
Հողմախառ անձրև և կարկուտ տեղաց,  
Շանթահար յեղավ մի հսկա կաղնի:

Թոփիր ոլացիր հողմերի թեվով,  
Իս շին բարսկամ ծանոթ արագիլ  
Յեթե անցնելու լինես լեռներով,  
Իջիր մեր գյուղի բարձր քարտիֆին:

Վոյոր կծփա դիօք Զանդուն հիմա:  
Ժալիտը թողած ժայռոտ անիրին,  
Ինչպես լուսաղեղ զիսակն աղջկա,  
Վոր դաշտարվում ե վողորկ թիկունքին:

ԱՌ զմահ ճամբորդ, կարոտ արեվի,  
Հյուսիսը թողած չվում ես հարավ,  
Մեր հող ու ջրին սրտանց բարեվիր,  
Վորտեղ, վոր դու ել մի որ կյանք առար:

Գնացիր, զնա՛, քեզ հաղար բարի  
Վաղուց մոռացված ընկեր իմ անդին,  
Բայց անշուշտ դիտեմ, վոր յեկող աարի,  
Զես մոռանա բունդ հնավիր վանքի:

Գնացիր, զնա՛, քեզ հաղար բարի,  
Մանկության ընկեր, ծանով արագիլ—  
Յես մի վեհ մարտիկ անհաղթ բանակի,  
Իսկ դու տարագիր...

1931



### Գ Ե Տ Ա Կ

Գետա՛կ, գետա՛կ—ընկեր մանկության,  
Դու հուշ անբիծ, անցած որերի,  
Հոսիր, հոսիր, խընդությամբ վարար  
Յել դարձիր յերգիս անխարդախ դինի...  
Գետա՛կ, գետա՛կ,—ճամբորդ անդադրուն,  
Դու յերդ, դու սեր—կարոտ անսպառ  
Դու թա՛փ, թըռիչք՝ իմ տարերքն ես դու...  
Հոսիր իմ. յերգից՝ գրչից ոկիզբ առ...  
Գնատակ, գետակ, փոխվել ես զուցե,  
Դարձել ես դու,—լայնահուն, խոհեմ  
Ո՛խ, լեզու առ, հետս զըրուցե,  
Դու յերդ բրնության ինքնազիր պահմ...

1935



ՄԻ ՓՈՔՐԻԿԵ

Ժաղացքը ու աճի... աճի ծաղկի պես,  
Վոչ ձյուն ես տեսել և վոչ փոթորիկ.—  
Նախանձելով եմ փայփայում յես քեզ,  
Ո՞ արև աչեր, իմ հոկտեմբերիկ:

Հայացքը իսպաղ, ջան, ջինջ ու լուսե,  
Ազատ ու անհոգ հասակ ես առնում.  
Ո՞ դու նոր կյանքի դուրդուրանք ու սեր,  
Սիրով յերգով վարդավառ դարսուն:

Արի փայփայեմ, արի սիրեմ քեզ,  
Իմ նոր հույզերի— հուզումնալի ալիք.  
Դեռ դու շատ կածես և կնվաճես,  
Ցերպի շողշողուն պայծառ դալիքը:

Ժաղաց ու աճի', աճի' ծաղկի պես,  
Վոչ ձյուն ես տեսել և վոչ փոթորիկ.—  
Նախանձելով եմ փայփայում յես քաղ,  
Ո՞ արև աչեր իմ անուշ մանկիկ...



Գ Ա Բ Ո Ւ Ն

Զրերն հորդում են.—այդ դու յես դարսուն.  
Քեզ ճանաչեցի յես քո ծիծաղից:  
Վազում ե դեար—յերզում ե առուն.—  
Այդ դու յես դարսուն...

Սարից ցած իջան ջրերն արծաթե  
Ու կարկաչեցին վորպես ավետիք...  
Ամպից ցած ընկապ ջրի մի կաթիլ.—  
Վորպես բիլ հակինթ...



¶ ॥ ॥ ॥ ॥



## ԱՆՏԱՌՈՒՄ

1.

Աշունը մոր պես դորովանքի ծով,  
Նստել եր անհաս լեռների վրա.  
Անձրեից հետո մի նեղ կածանով  
Անտառը մտա...

Աշնան լոռւթյուն—քաղցր ու դրավիչ,  
Իսկ շուրջո՞ ծառեր, ծառեր ու ծառեր,  
Զգում ես՝ կյանքում լավ և ամեն լին,  
Յեթե չե նա ծեր...

Շնչում ե ապրում անտառը համայն,  
Աշխարհ ե ուրույն— լոռւթյամբ խորին.  
Յեվ բաղմամիլիոն ծառերը վոր կան,  
Սակա ծանոթ եմ նրանց բոլորին...

Լոռւթյունը խոր, անհուն ու անծայր,  
Ուր սուզլում եմ յես ինչպես մի հյուլե—  
Վորտեղ մարդու պես ունի ամեն ծառ,  
Յերազն իր չքնաղ և կյանքը դունեղ...

2.

Մաղվում և չուայլ աշնան արեր,  
Յես խորանում եմ խորքը անտառի:  
Խոյացել են վեր բոլ ծառերը՝  
Հսկա բներով... Տեսքով վիթխարի...

Ահա մի փոքրիկ, մի նորածիլ ծառ,—  
Մի դեղաղալար՝ դալուկ ակացի:  
Դեռ արմատով թույլ՝ ծըմակում մի քմու,  
Զդուռում ե նա վեր, կարոտ արևի...

Բայց ծառերը խլու... Տերեներն ակահ,  
Արեն են ծածկել ու ամպի նման:  
Կենառառ լույսը ծծում են անհագ  
Վոր մեկը մյուսից վերև բարձարան...

Իսկ այն դալկահար ծառը նորածիլ,  
Փարզել ե դժուռյն տերեներն իրա.  
Յեկ սպասում ե, վոր արեւն անծիր,  
Մի լույս ճառաղայթ բաժակն իր ածի...

3.

Փոքրիկ ակացի, նորածիլ իմ ծառ,  
Յես ինձ հիշեցի, յերբ վոր քեզ տեսա—  
Մեր կյանքով մենք չառ նման ենք իրար.  
Կարծես ծլեցի քեզ հետ կյանք առա...

Քեզ պես արեկի ու ջրի ծարավ,  
Յես ել եմ աճում, ձգտում դեպի վեր.  
Յերդի անտառում—ծընվա—կյանք առա...  
Վորաեղ կյան ծառեր հավիտյան անմահ:

Ծառեր, ո, ծառեր, բարձր քան արև,  
Վոր վոչ մահ գիտեն... Յեկ վոչ ծերություն.  
Ո, ի՞նչքան, ի՞նչքան... ի՞նչքան յերկարել,  
Վոր հասնել նրանց կատարները ձյուն...

Յերդի հանձարներ—անհաս ու անմահ,  
Ներշնչում են ինձ տիտաններ զբէի:  
Քեզնից ավելի պետք ե խոյանամ,  
Քեզնից ավելի յերդն իմ պետք ե ածի...

4.

Կյանքն ինձ գուրգուրեց և յես մհծացա,  
Աշուն եր կրկին, յերբ վոր կարոտով  
Յես մի որ այն մհծ անտառը մտա,  
Տարիներ հետո...

Զկար իմ ծանոթ վոքրիկ ակացին,  
Զկային նաև շատ ուրիշ ծառեր,  
Բայց աճել եյին այնտեղ միասին  
Յեղինջ ու բաղեղ...

Նայեցի չուրջս լուռ ու մտախոհ,  
Անտառը նույնն եր—դեղեցիկ ու թավ.  
Ու պարուրեց ինձ ինդություն մի խոր  
Յեվ անտառն անծայր...

Հետ գարձաւ ուրախ իմ անցած ճամբով,  
Ինձ վողջույն տվին և՛, ծառ, և՛ ծաղիկ  
Պարզեցի ձեռքս անհուն հրճվանքով  
Յեվ մի վարդ քաղի...

Բոլոր ծառերը մեղմ սվավացին,  
Յեվ կարկաչեցին ջրերը զուլաւ...  
Կարծես թէ նրանք մեկեն ասացին  
— Մեր բուրժունքն ել առ...

5.

Անտառը թողի լեռների վրա,  
Իսկ յես ցած իջա կարոտով անհուն...  
Յես հալարու եյի, իմ ձեռքին քնար,  
Հիշելով պայծառ մի անմահ անուն...

Յեվ յես հիշեցի: Հեռու-հեռավոր,  
Բյուրավոր մարդկանց, — հայրենիքից դուրս,  
Ուր հազարներ են մեռնում ամեն որ՝  
Ինչպես ակացին, դժգունակ, անհույս...

Աշունը մոր պես գորովանքի ծով,  
Նստել եր անհաս լեռների վրա...  
Մթնում եր արդեն... Յերգ ու ծիծաղով  
Տուն վերադարձա...



## ԿԱՊԻՏԱՆ ԶՈՆՅ

(Հակեմբերյան Մեծ Հեղափոխության 20-րդ տարեդարձին)

### Նախերգ

Մոսկվայում նստած գործում եր ցեկան,  
Փայքարի ղեկը վարում եր լենինը.  
Լարել եր վերջին իր ուժն ու մըկան,  
Յեկ գյուղ և քաղաք բարիկադ եյին:

Տվել եր նա թափ ու մասսային կամք,  
Տվել եր յեռանդ ու մտքի նոր գենք:  
Վորակն մասսայից անբաժան մի մարդ,  
Կորան եր չըջում, գործում ամեն տեղ:

Յեկ որ և գիշեր թափվում եր անվերջ,  
Բոլոր Փրոնտներից հարց ու պատասխան.  
Հսկա քարտեղը փուած իր առջեւ  
Իլյիչն եր լուծում հարցերն անսխալ...

